1.1. ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՏԵՆՆՈՒՈՒԳԻԱՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է (այսուհետ՝ Հիմնադրամ): Հիմնադրամը ստեղծվել է «Դասագրքերի շրջանառու հիմնադրամ» հասարակական կազմակերպության /ԴՇՀՀԿ/ վերակազմավորման արդյունքում Դասագրքերի շրջանառու հիմնադրամ անվանումով: 03.06.2011թ.-ին Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստի որոշմամբ հիմնադրամի անվանումը փոփոխվել է և հաստատվել է նոր խմբագրությամբ կանոնադրությունը:

Հիմնադրամը գործում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք), այլ իրավական ակտերի և սույն կանոնադրության համաձայն:

1.2. Հիմնադրամի անվանումն է՝
հայերեն լրիվ՝ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՏԵՆՆՈՒՈՒԳԻԱՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒ ՀԻՄՆԱԴՐԱՄ

1.3. Հիմնադրամի գտնվելու վայրն (փոստային հասցեն) է՝
0070, ՀՀ ք. Երևան, Ռոստոմի 29 շենք, 164 բն.:

Հիմնադրամի հիմնադիրն է՝

- «Դասագրքերի շրջանառու հիմնադրամ» հասարակական կազմակերպությունը (գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության կոլեգիայի 29.08.1997թ. թիվ 33/2-2 որոշմամբ, գտնվելու վայրը ք. Երևան, Մ. Խորենացու 13, կազմակերպության նախագահ՝ Դ. Զաղոյան):

1.4. Հիմնադրամի փաստացի և հնարավոր շահառուներն են՝

- Ուսումնական հաստատություններ, մանկավարժներ, սովորողներ, ծնողներ:
- Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներ:

1.5. Հիմնադրամը քաղաքացիների և (կամ) իրավաբանական անձանց կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը հետապնդում է սոցիալական, հոգևոր, բարեգործական, կրթական, մշակութային և այլ հանրօգուտ նպատակներ:

Հիմնադրի կողմից Հիմնադրամին հանձնած գույքը Հիմնադրամի սեփականությունն է:

Հիմնադիրը պատասխանատվություն չի կրում իր ստեղծած Հիմնադրամի պարտավորությունների համար: Հիմնադրամը պատասխանատվություն չի կրում իր հիմնադրի պարտավորությունների համար:

1.6. Հիմնադրամը կարող է զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ միայն այն դեպքում, երբ դա ծառայում է այն նպատակների իրականացմանը, որոնց համար ստեղծվել է Հիմնադրամը և համապատասխանում է այդ նպատակներին:

1.7. Հիմնադրամն անձամբ կարող է զբաղվել իր կանոնադրությամբ նախատեսված ձեռնարկատիրական գործունեության տեսակներով՝ Օրենքով սահմանված կարգով:

Հիմնադրամը պարտավոր է յուրաքանչյուր տարի հաշվետու տարվան հաջորդող մարտի 25-ից ոչ ուշ հաշվետվություն հրապարակել իր գործունեության մասին:

1.8. Հիմնադրամն իրավաբանական անձ է և ստեղծված է համարվում օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:

Հիմնադրամն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով բացել բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ Հայաստանի Հանրապետության դրամով և (կամ) արտարժույթով:

1.9. Հիմնադրամն ինքնուրույն է որոշում իր գործունեության ռազմավարական ծրագրերը:

1.10. Հիմնադրամը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.11. Հիմնադրամը իր կանոնադրությանը համապատասխան, սեփականատիրոջ իրավունքով, իրականացնում է իր ունեցվածքի տնօրինումը, օգտագործումը և տիրապետումը:

1.12. Հիմնադրամը Հայաստանի Հանրապետությունում և նրանից դուրս կարող է ստեղծել մասնաձյուղեր և ներկայացուցչություններ, ինչպես նաև հիմնարկներ, որոնք գործում են Հիմնադրամի անունից՝ Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված կանոնադրություններին համապատասխան:

1.13. Հիմնադրամը իր պարտավորություններով պատասխանատվություն է կրում այն գույքով, որի վրա Օրենքով կարող է բռնագանձում տարածվել:

1.14. Հայաստանի Հանրապետությունը և համայնքները պատասխանատվություն չեն կրում Հիմնադրամի պարտավորությունների համար: Հիմնադրամը պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության և համայնքների պարտավորությունների համար:

1.15. Հիմնադրամի իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և օրենքով սահմանված կարգով:

1.16. Հիմնադրամի գործունեության ժամկետը՝ անժամկետ:

Հիմնադրամն ունի օրենքով չարգելված բոլոր եղանակներով իր քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության իրավունք:

2. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ՈՒ ՏԵՍԱԿՆԵՐԸ

2.1. Հիմնադրամի հիմնական նպատակն է՝

- Աջակցել Հայաստանի Հանրապետության կրթության բնագավառում հիմնախնդիրների լուծմանը և կրթության զարգացմանը ուղղված ծրագրի իրականացմանը, Հայաստանի Հանրապետության ուսումնական հաստատությունները դասագրքերով, գրքերով, և այլ ուսումնամեթոդական նյութերով ապահովելուն:

Հիմնադրամի գործունեության սկզբունքներն են՝

- Հիմնադրամը ապահովում է իր գործունեության հրապարակայնությունը.
- Հիմնադրամն աշխատում է դասագրքերի, գրքերի, ուսումնամեթոդական այլ գրականության ինչպես նաև տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների ոլորտում նորարարությունների ձեռքբերման գործընթացի շարունակականության, վերարտադրության և հավաքագրված գումարների շրջանառության սկզբունքով.
- Հիմնադրամը տնօրինում է ուսումնական հաստատությունների կողմից հավաքագրված դրամական միջոցները իր կանոնադրական նպատակներին համապատասխան.
- Ուսումնական հաստատությունները ի դեմս լիազոր անձանց, տնօրենի և հաշվապահի, որոնք գործում են ի պաշտոնե, ապահովում են իրացման, ինչպես նաև անհատույց կարգով տրամադրվող դասագրքերի, գրքերի, ուսումնամեթոդական այլ գրականության, ինչպես նաև տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների բաշխումը, հավաքագրված գումարների մուտքագրումը Հիմնադրամ՝ ուսումնական հաստատությունների բանկային ենթահաշիվների միջոցով.

- Ղասագրքերի, գրքերի և ուսումնամեթոդական այլ գրականության ձեռքբերումը հիմնադրամի կողմից կատարվում է վերահրատարակման կամ մրցութային սկզբունքներով ուսումնական հաստատությունների կողմից տրված անվանացանկի և քանակների վերաբերյալ պատվերների հիման վրա.
- Տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների ձեռքբերումը կատարվում է Հիմնադրամի կողմից ըստ ուսումնական հաստատություններից ստացված անվանացանկի և քանակների վերաբերյալ պատվերների

2.2 Հիմնադրամը սերտորեն համագործակցում է ՀՀ ԿԳ նախարարության հետ հետևյալ հարցերի շուրջ՝

- Ղասագրքերի, գրքերի, ուսումնամեթոդական այլ գրականության, տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների տրամադրման կանոնակարգերի մշակում և հաստատում.
- Ձեռք բերվող դասագրքերի, գրքերի և ուսումնամեթոդական այլ գրականության, քանակների, անվանացանկի չափորոշիչների, գների և այլ հարցերի հաստատում.
- Հավաքագրվող գումարների չափերի սահմանում և հաստատում.
- Ղասագրքերի, գրքերի և ուսումնամեթոդական այլ գրականության և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների գնումների իրականացում.
- Ուսուցման և վերապատրաստման ծրագրերի մշակում և իրականացում

2.3 Իր հիմնական նպատակին հասնելու համար Հիմնադրամը՝

- Կուտակում և իր կանոնադրության համաձայն տնօրինում է իրեն հանձնված նվիրատվությունները.
- Կուտակում և իր կանոնադրական նպատակների համաձայն տնօրինում է դասագրքերի, գրքերի, ուսումնամեթոդական այլ գրականության և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների դիմաց հավաքագրված միջոցները, Հայաստանի Հանրապետության կառավարության, ինչպես նաև այլ աղբյուրներից իրեն հատկացված նպատակային ներդրումները.
- Կառավարում է դասագրքերի, գրքերի, ուսումնամեթոդական այլ գրականության, ինչպես նաև տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների պատվերի համակարգը.
- Կարող է ապահովել անվճար դասագրքերի, գրքերի, ուսումնամեթոդական այլ գրականության, և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների տրամադրումը կարիքավոր և սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին՝ համաձայն իր կանոնակարգի.
- Համակարգում է դասագրքերի, գրքերի և ուսումնամեթոդական այլ գրականության իրատարակումը և բաշխման գործընթացը.
- Մշակում և իրականացնում է գիտակրթական և սոցիալական բնույթի այլ ծրագրեր.
- Իրականացնում է մասնագետների վերապատրաստման և ուսուցման ծրագրեր:
- Աջակցում է կրթության և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների ոլորտի մասնագետների մասնագիտական զարգացմանը:
- Կարող է իր կողմից տնօրինվող ժամանակավորապես ազատ ֆինանսական միջոցների հաշվին, տոկոսային եկամուտ ստանալու նպատակով, ձեռքբերել Հայաստանի Հանրապետության կառավարության, ինչպես նաև ֆինանսական կազմակերպությունների կողմից թողարկված ընթացիկ և ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ:

2.4 Ձեռնարկատիրական գործունեությունը.

Հիմնադրամը կարող է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնել միայն այն դեպքում, երբ դա ծառայում է սույն կանոնադրամբ ամրագրված նպատակների իրականացմանը: Հիմնադրամը ձեռնարկատիրական գործունեություն

կարող է իրականացնել անձամբ կամ այդ նպատակով ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել դրանց մասնակից:

Իր առջև դրված նպատակների արդյունավետ կատարումն ապահովելու համար Հիմնադրամը՝

- համագործակցում է համանման այլ կազմակերպությունների հետ (այդ թվում օտարերկրյա).
- համագործակցում է պետական, հասարակական և առևտրային կազմակերպությունների հետ.

3. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ ԱՅՆ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Հիմնադրամն իր կանոնադրության նպատակներին համապատասխան իրավունք ունի՝

- 1) նյութապես աջակցել ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ օրենքով սահմանված կարգով.
- 2) անարգել տարածել տեղեկություններ իր գործունեության մասին.
- 3) հիմնադրել մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներ.
- 4) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով կատարել կանոնադրության փոփոխություններ.
- 5) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից օրենքով սահմանված կարգով ստանալ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են իր կանոնադրական նպատակներն իրականացնելու համար.
- 6) ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր, ներկայացուցչություններ) և հիմնարկներ.
- 7) ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել նրանց մասնակից.
- 8) ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ կնքել պայմանագրեր.
- 9) իրականացնել գիտական հետազոտություններ և ծրագրերի մշակումներ.
- 10) աջակցել ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից առաջարկված մշակութային, կրթական, գիտական բնույթի նախաձեռնությունների իրականացմանը.
- 11) իրականացնել օրենքով չարգելված այլ գործունեություն:

3.2. Հիմնադրամը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և իր կանոնադրությանը համապատասխան, կարող է անդամակցել միջազգային և օտարերկրյա ոչ պետական կազմակերպություններին:

3.3. Հիմնադրամը պարտավոր է՝

- 1) գործել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Օրենքին և այլ օրենքներին ու իրավական ակտերին, ինչպես նաև սույն կանոնադրությանը համապատասխան.
- 2) օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում.
- 3) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն ու հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններ.
- 4) իրականացնել Օրենքով և այլ օրենքներով սահմանված այլ պարտականություններ:

3.4. Սույն կանոնադրության 5.5.-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով նախատեսված անձանց, ինչպես նաև իրավասու պետական մարմինների պահանջով Հիմնադրամը պարտավոր է հնգօրյա ժամկետում նրանց ընձեռել կանոնադրության, կանոնադրության լրացումների և փոփոխությունների հետ ծանոթանալու հնարավորություն: Հիմնադրամը պարտավոր է այդ անձանց պահանջով տրամադրել նրան կանոնադրության պատճենը: Վճարը, որը գանձվում է կանոնադրության պատճենը տրամադրելու համար, չի կարող դրա պատրաստման ծախսերից ավելի մեծ

լինել: Իրավասու պետական մարմիններին նշված փաստաթղթերը տրամադրվում են անվճար:

3.5. Անօրինական գործունեություն ծավալելու համար Հիմնադրամը և նրա պաշտոնատար անձինք կրում են օրենքով սահմանված պատասխանատվություն:

3.6. Հիմնադրամին օգնություն ցուցաբերող անձինք (այդ թվում՝ Հիմնադրամի հիմնադիրը) իրավունք ունեն.

- ա) մասնակցել Հիմնադրամի գործունեության բոլոր ուղղություններին,
- բ) Հիմնադրամի կառավարման մարմինների կողմից, ինչպես նաև կնքված պայմանագրերով սահմանված պայմաններով Հիմնադրամի խնդիրներին ու նպատակներին համապատասխան ստանալ, խորհրդատվական, փորձագիտական, միջնորդական, գիտատեխնիկական և այլ օգնություն,
- գ) Հիմնադրամի միջոցով ստեղծել և զարգացնել երկկողմ և բազմակողմ կապեր,
- դ) Հիմնադրամի կողմից նրա իրավունքների, իրավական և տնտեսական հնարավորությունների շրջանակներում օգտվել սեփական շահերի պաշտպանությունից,
- ե) ցանկացած ժամանակ դադարեցնել իրենց մասնակցությունը Հիմնադրամի աշխատանքներին:

3.7. Հիմնադրամը վարում է իր գործունեությանը աջակցող անձանց ռեեստր:

3.8. Հիմնադրամին աջակցող անձինք պարտավոր են.

- ա) Հիմնադրամի ծրագրերի և միջոցառումների իրականացման ժամանակ գործել Հիմնադրամի կանոնադրության պահանջներին խիստ համապատասխան,
- բ) չտարածել Հիմնադրամի գործունեության մասին գաղտնի տեղեկություններ,
- գ) գերծ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են վնաս պատճառել Հիմնադրամին:

4. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

4.1. Հիմնադրամը իր գործունեությունը իրականացնում է իր մարմինների միջոցով:

Հիմնադրամի կառավարման մարմիններն են՝

- Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ),
- Հիմնադրամի գործադիր տնօրենը (այսուհետ՝ տնօրեն):

4.2. Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն է (այսուհետ՝ խորհրդի առաջին կազմը ձևավորվել է հիմնադրման պահին՝ ներկայացուցչական սկզբունքով: Այն բաղկացած է 17 (տասնյոթ) անդամից: Խորհրդի անդամների փոփոխությունը կատարվում է խորհրդի նիստի որոշմամբ:

4.3. Խորհրդի անդամ կարող են լինել 18 տարին լրացած գործունակ ֆիզիկական անձինք:

Խորհրդի անդամների լիազորությունները սահմանվում է անժամկետ:

Խորհրդի անդամի լիազորությունը դադարում է.

1. նրա գրավոր դիմումի հիման վրա.

2. նրա կողմից իր պարտականությունները պատշաճ չկատարելու դեպքում, խորհրդի մնացած անդամների ձայների առնվազն 3/4-ով.

Խորհրդի անդամները չեն կարող լինել հիմնադրամի այլ մարմնի անդամ

4.4. Հիմնադրամի Խորհրդի իրավասությանն են պատկանում՝

1) հիմնադրամի ռազմավարական ծրագրի (ծրագրերի) հաստատումը.

2) հիմնադրամի բյուջեի և նրա փոփոխությունների, տարեկան ֆինանսական հաշվետվությունների և հիմնադրամի գործունեության տարեկան հաշվետվությունների հաստատումը.

- 3) հիմնադրամի վերակազմակերպման մասին որոշման ընդունումը.
- 4) հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նոր անդամների ընտրությունը և հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը.
- 5) հոգաբարձուների խորհրդի նախագահի, հիմնադրամի տնօրենի և կանոնադրությամբ սահմանված այլ մարմինների ընտրության և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարման մասին որոշումների ընդունումը.
- 6) հիմնադրամի կանոնադրությամբ նախատեսված այլ մարմինների ձևավորումը.
- 7) հիմնադրամի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, նոր խմբագրությամբ կանոնադրություն հաստատելու մասին որոշումների ընդունումը.
- 8) տնտեսական ընկերությունների ստեղծման կամ դրանցում մասնակցության, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծման և դրանց կանոնադրությունների հաստատման մասին որոշումների ընդունումը.
- 9) հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումը.
- 10) իր որոշումների կատարման ընթացքի վերահսկումը.
- 11) հիմնադրամի աուդիտ իրականացնող անձի (աուդիտորի) ընտրությունը.
- 12) Հիմնադրամի կառավարման մարմիններում ընդգրկված անձանց աշխատանքի վարձատրության մասին որոշումների ընդունումը,
- 13) Օրենքով, սույն կանոնադրությամբ նախատեսված, ինչպես նաև հիմնադրամի այլ մարմիններին չվերապահված այլ լիազորությունների իրականացումը:

4.5. Հիմնադրամի խորհրդի նիստերում խորհրդի յորաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:

Հիմնադրամի խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են խորհրդի անդամների առնվազն 2/3-ը: Հիմնադրամի խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ, բացառությամբ հետևյալ երկու դեպքերի՝

- 1) Հիմնադրամի վերակազմակերպման, լուծարման, կանոնադրության մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու (նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատում) և անվանման փոփոխության վերաբերյալ որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ընդհանուր թվի 2/3-ով:
- 2) Հիմնադրամի խորհրդի նախագահի, Հիմնադրամի տնօրենի ընտրության և ազատման որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ընդհանուր թվի 3/4-ով:

Եթե Հիմնադրամի խորհրդի նիստում քննարկվում է Հիմնադրամի խորհրդի որևէ անդամի կամ նրա հետ փոխկապակցված անձի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) գույքային կամ այլ շահերի վերաբերյալ հարց, ապա Հիմնադրամի խորհրդի տվյալ անդամը քվեարկությանը չի մասնակցում:

4.6. Հիմնադրամի խորհրդի նախագահին ընտրում են խորհրդի անդամները՝ Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

4.7. Հիմնադրամի խորհուրդը կարող է ցանկացած ժամանակ ընտրել նոր նախագահ:

Հիմնադրամի խորհրդի նախագահը՝ (հիմնադրամի նախագահը՝)

- 1) կազմակերպում է Հիմնադրամի խորհրդի աշխատանքները.
- 2) գումարում է Հիմնադրամի խորհրդի նիստերը և նախագահում է դրանք.
- 3) կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը:
- 4) հոգաբարձուների խորհրդի հաստատմանն է ներկայացնում Հիմնադրամի ռազմավարական ծրագրերը, բյուջեն և դրա փոփոխությունները, գույքի տնօրինման և արտաքին գործունեության վարման կարգը.

5) լիազորագրով ներկայացնում է Հիմնադրամը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում.

4.8. Հիմնադրամի խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները, Հիմնադրամի խորհրդի որոշմամբ, կատարում է անդամներից մեկը:

4.9. Հիմնադրամի խորհրդի նիստերը գումարվում են ոչ պակաս, քան տարին մեկ անգամ՝ Հիմնադրամի խորհրդի նախագահի կողմից: Հիմնադրամի խորհրդի նիստերը կարող են հրավիրվել նաև Հիմնադրամի խորհրդի անդամների 1/3-ի պահանջով՝ Հիմնադրամի խորհրդի նախագահի կողմից՝ համապատասխան պահանջը ներկայացնելուց 30 օրվա ընթացքում: Հիմնադրամի խորհրդի նիստերը կարող են անցկացվել էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցների կիրառմամբ:

Եթե նշված ժամկետում Հիմնադրամի խորհրդի նախագահը նիստ չի հրավիրում, ապա նիստը կարող են հրավիրել նման պահանջ ներկայացրած անձինք:

4.10. Հիմնադրամի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է հիմնադրամի տնօրենը:

Տնօրենը կազմավորում և գլխավորում է գործադիր գրասենյակը: Գործադիր գրասենյակի աշխատակիցները նշանակվում և ազատվում են աշխատանքից տնօրենի հրամանով: Գործադիր գրասենյակը իրականացնում է հիմնադրամի ամենօրյա աշխատանքը սույն կանոնադրության դրույթներին, խորհրդի որոշումներին և հանձնարարություններին համապատասխան:

4.11. Հիմնադրամի տնօրենի իրավասությանն են պատկանում հիմնադրամի ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ Օրենքով և սույն կանոնադրությամբ Հիմնադրամի խորհրդի իրավասություն հանդիսացող հարցերի:

Հիմնադրամի տնօրենը կազմակերպում է Հիմնադրամի խորհրդի որոշումների կատարումը:

Տնօրենը ընտրվում և պաշտոնից ազատվում է Հիմնադրամի խորհրդի կողմից: Տնօրենի պաշտոնում առաջին անգամ նշանակում է կատարել նաև հիմնադիրը:

Հիմնադրամի տնօրենի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Օրենքով և սույն կանոնադրությամբ:

4.12. Հիմնադրամի տնօրենը՝

- 1) տնօրինում է Հիմնադրամի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում հիմնադրամի անունից.
- 2) ներկայացնում է Հիմնադրամը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում.
- 3) գործում է առանց լիազորագրի.
- 4) տալիս է լիազորագրեր.
- 5) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.
- 6) բանկերում բացում է Հիմնադրամի հաշվարկային (այդ թվում՝ արտարժույթային) և այլ հաշիվներ.
- 7) Հիմնադրամի խորհրդի հաստատման է ներկայացնում Հիմնադրամի աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ու Հիմնադրամի կողմից հիմնադրվող տնտեսական ընկերությունների կանոնադրությունները, Հիմնադրամի վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը.
- 8) մշակում և հոգաբարձուների խորհրդի քննարկմանն է ներկայացնում Հիմնադրամի ռազմավարական ծրագրերը, բյուջեն և դրա փոփոխությունները, գույքի տնօրինման և արտաքին գործունեության վարման կարգը.
- 9.) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

10) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում հիմնադրամի աշխատակիցներին.

11) աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

4.13. Հիմնադրամի տնօրենը այլ կազմակերպություններում կարող է վճարովի պաշտոններ զբաղեցնել միայն Հիմնադրամի Խորհրդի համաձայնությամբ:

4.14. Հիմնադրամի Խորհուրդն իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծել տնօրենի հետ կնքված պայմանագիրը՝ Օրենքով, սույն կանոնադրությամբ և տվյալ պայմանագրով սահմանված կարգով:

4.15. Հիմնադրամը Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով վարում և ներկայացնում է հաշվապահական և վիճակագրական հաշվետվություն:

4.16. Հիմնադրամը պետական, սոցիալական, տնտեսական և հարկային քաղաքականության իրականացման նպատակով պատասխանատվություն է կրում փաստաթղթերի (կառավարչական, ֆինանսատնտեսական, աշխատակազմի մասին և այլն) պահպանման համար: Հիմնադրամը օրենքով սահմանված կարգով ապահովում է անհրաժեշտ փաստաթղթերի հանձնումը պետական արխիվային մարմիններին:

5. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՒՅՔԸ

5.1. Հիմնադրամը՝ որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

5.2. Հիմնադրամի ստեղծման պահին սկզբնական գույք չի ներդրվել:

5.3. Հիմնադրի կողմից Հիմնադրամին հանձնած գույքը Հիմնադրամի սեփականությունն է: Հիմնադրամն այդ գույքն օգտագործում է իր կանոնադրությամբ սահմանված նպատակով:

5.4. Հիմնադրամի հիմնադրի և այլ ֆիզիկական և իրավաբանական անձանց ներդրումները (նվիրաբերությունները, նվիրատվությունները և այլն) կարող են կատարվել ինչպես դրամական և գույքային տեսքով (այդ թվում՝ սարքավորումներ, շենքեր, շինություններ, մտավոր սեփականության նկատմամբ իրավունքներ), այնպես էլ գույքի նկատմամբ օգտագործման իրավունքի տեսքով: Այս դեպքում կատարվում է ներդրվող գույքի կամ օգտագործման իրավունքի դրամական գնահատում, որի մեծությունը նշվում է հիմնադրման մասին պայմանագրում կամ համապատասխան անձի (ներդրողի) ու Հիմնադրամի միջև կնքվող պայմանագրում:

5.5. Հիմնադրամի գույքի և միջոցների ձևավորման աղբյուր կարող են լինել՝

ա) հիմնադրի ներդրումները.

բ) ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվությունները և նվիրաբերությունները, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների, իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների նվիրատվությունները և նվիրաբերությունները.

գ) դրամական մուտքերը պետական բյուջեից.

դ) դրամաշնորհները.

ե) հիմնադրամի և իր ստեղծած կամ իր մասնակցությամբ տնտեսական ընկերությունների ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները, շահույթը.

զ) հանգանակությունները՝ միջոցներ, որոնք ստացվում են դրանց կուտակմանն ուղղված գործունեությունից (մշակութային, սպորտային, զվարճալի և այլ միջոցառումների միջոցով գումարների հայթայթում),

է) դասագրքերի, գրքերի, ուսումնամեթոդական այլ գրականության և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների դիմաց հավաքագրված գումարները



- ը) ՀՀ կառավարության ֆինանսական ներդրումները,
- թ) այլ ֆինանսական և գույքային հատկացումները,
- ժ) բանկային հաշիվների վրա կուտակված տոկոսները,
- ի) արժեթղթերից ստացված եկամուտները,
- լ) նպատակային ներդրումները,
- խ) օրենքով չարգելված այլ միջոցները:

5.6. Հիմնադրամի սեփականությունն է համարվում իր կողմից ստեղծված, ձեռքբերված կամ այլ քաղաքացիների, կազմակերպությունների կողմից հանձնված ունեցվածքը, ներառյալ՝ դրամական միջոցները, բաժնետոմսերը, այլ արժեթղթերը և մտավոր սեփականության նկատմամբ իրավունքները:

5.7. Հիմնադրամի ամբողջ ունեցվածքը, տնտեսական գործունեությունից ստացված եկամուտները համարվում են նրա սեփականությունը և չեն կարող որպես շահույթ հատկացվել Հիմնադրամի հիմնադրին: Հիմնադրամը իրականացնում է իր ունեցվածքի տնօրինումը, օգտագործումը և տիրապետումը միայն այդ գույքի նշանակությանը համապատասխան և միայն Հիմնադրամի կանոնադրական խնդիրների և նպատակների իրականացման համար:

5.8. Հիմնադրամի սեփականությունը չի կարող օգտագործվել ի շահ իր հիմնադիրների, հիմնադրամի մարմինների անդամների, ինչպես նաև Հիմնադրամի աշխատողների, բացառությամբ աշխատողների աշխատավարձի և Հիմնադրամի մարմինների անդամների պարտականությունների կատարմամբ պայմանավորված՝ փոխհատուցման ենթակա ծախսերի: Իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից որոշակի նպատակներով Հիմնադրամին տրված նվիրաբերությունը կարող է օգտագործվել այլ նպատակներով, միայն նվիրաբերողի համաձայնությամբ: Հանգանակությունից ստացված միջոցները կարող են ծախսվել միայն այն նպատակով, որը հատարարվել էր նախապես:

6. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

6.1. Հիմնադրամը կարող է վերակազմակերպվել միայն հիմնադրամի միացման և միաձուլման ձևով:

6.2. Հիմնադրամների միաձուլում է համարվում նոր հիմնադրամի ստեղծումը՝ նոր երկու կամ ավելի միաձուլվող հիմնադրամների իրավունքների և պարտականությունների փոխանցմամբ և միաձուլվող հիմնադրամների դադարմամբ:

6.3. Հիմնադրամների միացում է համարվում մեկ կամ մի քանի հիմնադրամների գործունեության դադարումը՝ դրանց իրավունքների և պարտականությունների փոխանցմամբ այլ հիմնադրամի:

6.4. Հիմնադրամի վերակազմակերպումը կատարվում է հոգաբարձուների կողմից որոշմամբ:

6.5. Հիմնադրամի այլ վերակազմակերպումներ չեն թույլատրվում:

6.6. Լուծարումը Հիմնադրամի գործունեության դադարումն է՝ առանց նրա իրավունքների և պարտականությունների իրավահաջորդության կարգով այլ անձանց փոխանցման:

6.7. Հիմնադրամը լուծարելու մասին որոշում կարող է ընդունել միայն Հիմնադրամի շահագրգիռ անձանց դիմումով:

6.8. Հիմնադրամը կարող է լուծարվել եթե՝

ա) Հիմնադրամի գույքը բավարար չէ նրա գործունեության իրականացման նպատակներին:

բ) իր գործունեությամբ Հիմնադրամը շեղվել է կանոնադրությամբ սահմանված նպատակներից:

գ) հնարավոր չէ հասնել Հիմնադրամի նպատակներին և հնարավոր չէ կատարել այդ նպատակների փոփոխություն:

դ) Հիմնադրամի գործունեությունը վտանգում է պետական և հասարակական անվտանգությունը, հասարակական կարգը, հանրության առողջությունն ու բարքերը, այլոց իրավունքներն ու ազատությունները:

ե) Հիմնադրամը թույլ է տվել օրենքի բազմակի կամ կոպիտ խախտումներ կամ պարբերաբար իրականացրել է իր կանոնադրական նպատակներին հակասող գործունեություն:

զ) Հիմնադրամն ստեղծելիս հիմնադիրը թույլ է տվել օրենքի էական խախտումներ կամ կեղծիքներ:

6.9. Հիմնադրամի լուծարումն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:

6.10. Հիմնադրամի լուծարմամբ պայմանավորված պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, ինչպես նաև այն դեպքում, երբ լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատելու պահին Հիմնադրամը չունի պարտավորություններ պարտատերերի նկատմամբ, Հիմնադրամի մնացած գույքն ուղղվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում փոխանցվում է պետական բյուջե:

6.11. Հիմնադրամի լուծարումը համարվում է ավարտված, իսկ նրա գործունեությունը դադարած՝ պետական գրանցման պահից:

menian

RECEIVED
MAY 11 1964
U.S. CUSTOMS & BORDER PROTECTION



Handwritten signature

RECEIVED
MAY 11 1964
U.S. CUSTOMS & BORDER PROTECTION

